

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՊԵՍ ԲԱՑ ԲԱՆԿԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԴԱՇՏՈՒՄ (OPEN BANKING) ԵՎ ՆՐԱ
ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ–ՈՒՄ*

Դավիթ Մինասյան

Բանալի բառեր՝ բաց բանկային համակարգ, ֆինթեք, 3-րդ կողմի կազմակերպություններ, տվյալների տարածում, միջազգային փորձի կիրառում:

Ներկայումս բանկային համակարգի առաջարկած ծառայությունների որակի և հաճախորդների սպասումների միջև, գոյություն ունի մեծ տարբերություն, քանի որ առևտրային բանկերը, տարված լինելով օրենսդրական դաշտի կարգավորումներով ու ներքին աշխատանքով, հաճախորդի պահանջմունքներին այդքան մեծ ուշադրություն չեն դարձնում: Այդ բացը իրական խաղաղաշտ է ֆինանսական տեխնոլոգիաների համար, որոնք զանազան լուծումներ են կիրառում հաճախորդներին նոր ծառայություններ մատուցելու համար: Դրա վառ ու ամենացայտուն օրինակներից է հենց տեխնոլոգիապես բաց բանկային համակարգը:

Աշխատանքի հետազոտության օբյեկտներն են տեխնոլոգիապես բաց բանկային համակարգը, որին այսուհետ կանդրադառնանք որպես բաց բանկային համակարգ: Հետազոտության սուբյեկտներն են հանդիսանում 3-րդ կողմի ծառայություն մատուցողները, ովքեր տարբեր API–ների (application programming interface) միջոցով ծառայություն են մատուցում հաճախորդներին, ինչպես նաև ֆինանսական վերլուծություն իրականացնող վարկային կազմակերպությունները, ներդրողները և այլ գործակալներ, ովքեր կարող են հասանելիություն ունենալ այլ անձանց հաշիվներին:

Աշխատանքում ներկայացված է տեխնոլոգիապես բաց բանկային համակարգի կիրառման հնարավորությունները ՀՀ–ում, միջազգային փորձի ուսումնասիրումը ու դրա արդյունքների արդյունավետ կիրառումը ՀՀ բանկային ոլորտում: Նկարագրվել է նաև այն երկրների փորձը բաց բանկային համակարգի կիրառման բնագավառում, որոնք արդյունավետ ներդրել են բաց բանկային համակարգի գործիքները, դրանց թվում են Հնդկաստանը, Մեծ Բրիտանիան, Մեքսիկան, Ճապոնիան:

Հիմնական հարցադրումները, որոնց աշխատանքում անդրադարձ է կատարվելու, այն է, թե բանկային համակարգի ո՞ր մոտեցումն է կիրառելի ՀՀ տնտեսության համար, ի՞նչ առավելություններ կտան դրանք բանկերին և հաճախորդներին, ինչի՞ն է պետք ավելի շատ ուշադրություն դարձնել ցանկալի արդյունքի հասնելու համար, ո՞րն է ուսումնասիրվող երկրների հաջողության գրավականը բաց բանկային համակարգերի կիրառման փորձում:

Այժմ ամբողջ աշխարհում կիրառվում են տվյալագիտության, թվային, ամպային տեխնոլոգիաների գործիքները, որոնց զարգացմանը զուգընթաց տվյալները սկսում են արժեք ձեռք բերել, միևնույն ժամանակ դրամական միավորները որպես այդպիսին կորցնում են իրենց նախկին դիրքը: Այս պարագայում կառավարությունները սկսում են գիտակցել, որ բանկի ունեցած տվյալները հաճախորդի մասին ոչ թե բանկի, այլ հաճախորդի սեփականությունն է, և նրանք իրավունք ունեն տնօրինել դրանք՝ ավելի արդյունավետ գործարքներ կատարելու, ապրանքներ ու ծառայություններ ձեռք բերելու նպատակով:

* Հոդվածն ընդունվել է 12.02.21:

Հոդվածը տպագրության է երաշխավորել տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբյանը: 20.02.21:

Տեխնոլոգիապես բաց բանկային համակարգի հիմքում ընկած է շատ պարզ մոտեցում՝ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների տվյալները հաճախորդների հաշիվների վերաբերյալ տարբեր 3-րդ կողմի կազմակերպությունների կողմից առաջարկվող ծրագրային փաթեթների միջոցով հասանելի են դառնում այլ օգտատերերի, և արդյունքում բանկային հաշիվների կառավարումը ու ֆինանսական գործարքներ իրականացնելը դուրս է գալիս բանկի մենաշնորհի տիրույթից:[7]

Այս համակարգի մյուս 2 կողմերն են հաճախորդը և ՓՄՁ-ները՝ մի կողմից, և բանկերը կամ ֆինանսական կազմակերպությունները՝ մյուս կողմից:

Տեխնոլոգիապես բաց բանկային համակարգի գործիքակազմի կիրառման արդյունքում հաճախորդներին մատուցվում են անհատականացված ու հարմարեցված ծառայություններ՝ ավելի ցածր արժեքով: Դրանց մի մասը ամբողջությամբ անվճար է: Այն հաճախորդների և բանկերի համար առաջարկում է նախկինում ծառացած բազմաթիվ խնդիրների լուծում: Անդրադառնալով դրանցից ամենակարևորներին.

- հաճախորդները հաճախ չեն օգտվում իրենց ընձեռված վարկային հնարավորություններից, կամ չեն կարողանում վարկ ստանալ, որը կարող է լուծվել բաց բանկային համակարգի միջոցով՝ օգտագործելով տվյալներն արդյունավետ վարկային հաշվետվություններ կազմելու համար,
- օվերդրաֆտները նույնպես մեծ խնդիր են համարվում բազմաթիվ բանկերի ու հաճախորդների համար: Բաց բանկային համակարգը կարող է հաճախորդներին ազատել օվերդրաֆտների կուտակումից և հետագայում դրանք վճարելու ժամանակ խնդրի առաջ կանգնելուց,
- հաճախորդների մեծ մասն օգտագործում է «սխալ» ապրանքներ՝ վարկային քարտեր, գրավներ, վարկեր և այլն, այն պարագայում, երբ առկա են ավելի եկամտաբեր կամ հարմար տարբերակներ: Նման դեպքում բաց բանկային համակարգը կօգնի ավելի ճիշտ ընտրություն իրականացնելու հարցում,
- պարտքի կամ վարկի վերադարձման, հետվճարման ավելի լավ պլաններ կարող են մշակվել՝ հաճախորդի ամսեկան եկամուտներին համապատասխան,
- համակարգի զարգացման որոշակի մակարդակի հասնելու դեպքում ՓՄՁ-ները հարկային պարտավորություններ իրականացնելուց կկարողանան խուսափել ավելորդ ծախսած ժամանակից ու թղթաբանությունից:

Բաց բանկային համակարգերը տարբերվում են բազմաթիվ հատկանիշներով, սակայն բոլորն էլ կարելի է դասակարգել 2 խմբի մեջ՝ շուկայահենք և կարգավորվող:[3]

Շուկայահենք մոտեցումը կիրառվում է ԱՄՆ-ում, Հնդկաստանում, Ճապոնիայում, Սինգապուրում, Հյուսիսային Կորեայում և այլուր: Այս մոտեցումը ենթադրում է, որ պետությունն ակտիվ քայլեր է ձեռնարկում ֆինթեք կազմակերպություններին խթանելու և բանկերի տվյալների տարածմանը նպաստելու համար, սակայն կոնկրետ ձևավորված բաց բանկային համակարգի դաշտ գոյություն չունի:

Կարգավորվող մոտեցման դեպքում արդեն պաշտոնապես ընդունվում է բաց բանկային ռեժիմ, որտեղ բանկերը և այլ ֆինանսական հաստատություններ որոշակի կանոնակարգերի հիման վրա պարտավոր են տարածել իրենց տվյալները՝ որոշակի պայմաններով՝ նրանք կարող են ընտրություն կատարել 3-րդ կողմի անձանց միջև, ում հետ ցանկություն կունենան համագործակցել: Այս մոտեցման կիրառման վառ օրինակներ են Հոնկոնգի և Ավստրալիայի համակարգերը:

Հոնկոնգում բաց API-ների մոտեցումը կիրառելու համար 2018 թվականին 4 փուլից բաղկացած ընթացակարգ է գործադրվել բանկերում API-ներ ներդնելու համար, որը սկսվում է ապրանքների ու ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տարածումից և ավարտվում գործարքային ինֆորմացիայով և վճարումների կառավարման ծառայություններով: Հակառակ Եվրամիության մոտեցմանը՝ Ճապոնիայում սահ-

մանափակում է դրվում այն անձանց վրա, ովքեր տրամադրում են ծառայությունները, սակայն Եվրոպական երկրներում այդպիսի սահմանափակում չկա. օգտատերերը հնարավորություն ունեն իրենց տվյալները տարածել ցանկացած 3-րդ կողմի հետ՝ սպառողների տվյալների իրավունքի ակտի շրջանակում (Consumer data right act):

Ավստրալիան, չնայած կարգավորվող մոտեցում է կիրառում, սակայն աչքի է ընկնում իր ազատական գաղափարներով, քանի որ սահմանափակում չի դնում ծառայություն մատուցողների վրա, այլ CDR (consumer data right)-ի միջոցով սահմանում է տվյալների օգտագործման պայմանները:

Ավստրալիայի մոտեցումը համեմատական առավելություն ունի մյուս մոտեցումների նկատմամբ, քանզի այն ավելի ձկուն ու ընդգրկուն է և չի սահմանափակում հաճախորդների ընտրությունը՝ միևնույն ժամանակ երաշխավորելով նրանց տվյալների անվտանգությունը:

Հնդկաստանը մեկ քայլով առաջ է անցել՝ ստեղծելով կենտրոնական համակարգ՝ UPI, որը մոտքի հնարավորություն է տալիս ավելի քան 100 բանկերի՝ 1 միասնական ինտեգրացիայի միջոցով: Այն հնարավորություն է տալիս Google Pay-ի և BHAM-ի (Հնդկաստանի 3-րդ կողմի ծառայություն) միջոցով իրականացնել վճարումներ ավելի քան 100 բանկերից, և արդեն գործարկման 2-րդ տարվանից Հնդկաստանում ներդրավել է ավելի քան 60 միլիոն ամսեկան ակտիվ թվային վճարումներ իրականացնողների: Հնդկաստանն իրականացրել է մեկ այլ կարևոր նորամուծություն և՛ նրա հաշիվներ ագրեգացնող համակարգը հնարավորություն է տալիս հաճախորդին ունենալ մեծ քանակով տվյալների հասանելիություն միայն 1 անգամ հաստատվելով հաճախորդի կողմից: Այսինքն՝ հաճախորդը տվյալները տարածելիս ամեն անգամ ստիպված չի լինի իրականացնել տվյալների տարածման հաստատում, այլ դա տեղի կունենա խմբավորված ձևով: Հաճախորդները թույլ են տալիս այս նոր ձևավորված հաստատություններին կապել միանգամից մի քանի աղբյուրներից եկած ֆինանսական տեղեկատվությունը և տարածել այն հարցման դեպքում [3]:

Մեքսիկան Եվրոպական Միության երկրների և Հնդկաստանի հետ միասին համարվում է բաց բանկային համակարգին անցում կատարած առաջին երկրներից: 2018 թվականին ֆինանսական տեխնոլոգիաների մասին օրենքը հաստատեց տվյալների տարածման պահանջները ֆինանսական համակարգի բոլոր հաստատությունների համար, որտեղ 3-րդ կողմին թույլատրվում է իրականացնել վճարումներ: Վերոնշյալ օրենքը լավ օրինակ է ցույց տալու համար, թե ինչպես ընդլայնել տվյալների առաջարկը:

2019 թվականից Մեքսիկայում գործարկվում է նաև CoDi սխեման, որը թույլ է տալիս ոչ բանկային ֆինթեքներին անմիջապես միանալ ցածր արժեքով օնլայն վճարային համակարգին (SPEI) և իրականացնել վճարումներ բանկային հաշիվների միջև: Այն թույլ է տալիս իրականացնել 1 վայրկյանում մինչև 8000\$-ի հասնող գործարքներ:

Չնայած վճարումներն իրականացվում են բանկային հաշիվների միջոցով՝ այս դեպքում ֆինթեքները և հաճախորդները կարիք չունեն բանկի կողմից հաստատման, այլ գործարքները կատարվում են միանգամից հաճախորդի հաշվից 3-րդ կողմի միջոցով: CoDi համակարգի ներդրումը պարտադիր է Մեքսիկայի բոլոր բանկերի համար, և եթե այն չընդգրկվի նրանց բանկային հավելվածներում, բանկերի նկատմամբ կկիրառվեն պատժամիջոցներ:

CoDi-ի և UPI-ի միջոցով հնարավոր դարձավ կտրուկ իջեցնել վճարումների արժեքը մինչև 0-ական մակարդակի՝ վճարումները դարձնելով կոմունալ համակարգի անբաժան մասը գրեթե ողջ երկրում:

Մեծ Բրիտանիայում բաց բանկային համակարգի կիրառումը սկսել է PSD2 -ի գործարկումից: Իրական բանկային համակարգում մրցակցություն սկսելու նպատակով Մեծ Բրիտանիայի իշխանությունները բանկերից պահանջեցին բացել իրենց

տվյալները և տարածել դրանք: Մեծ Բրիտանիայի ֆինանսական կազմակերպությունների հետազոտությունը ցույց է տվել, որ նման քայլը կխթանի ավելի մրցակցային ու նորարար բիզնես մոդելների ստեղծմանը՝ առաջարկելով նոր ծառայություններ հաճախորդներին, ինչպիսիք են էժան վճարային լուծումները, բյուջետավորման և փողի կառավարման տվյալահենք գործիքակազմը՝ հնարավորություն տալով նաև ընտրություն կատարել ծառայություն մատուցողների միջև: Մեծ Բրիտանիայում բաց բանկային համակարգը սկսել է կիրառվել 2018 թվականին՝ տարեվերջին ունենալով արդեն թվով 100 3-րդ կողմի ծառայություն մատուցողներ, որոնց թիվը կրկնապատկվել է 2020 թվականին: Կրկնապատկվել է նաև բանկերի թիվը, որոնք տարածել են իրենց տվյալները:

Այժմ ակտիվ քննարկման է ենթակա այն հարցը, որ եվրոպական երկրները պետք է սկսեն համընդհանուր մոտեցում գտնել բաց բանկային համակարգի տարբեր մոտեցումները հարթեցնելու համար: Ըստ այդ տեսակետի՝ անհրաժեշտ է API-ների ստանդարտ ձև մշակել եվրոպական մակարդակով՝ շուկան ավելի վերահսկելի ու հեշտ կառավարելի դարձնելու, ինչպես նաև ավելորդ ռիսկերից խուսափելու համար [1]:

Բանկային խաղացողները հիմնականում դիմադրություն են ցույց տալիս՝ կապված անվտանգության խնդիրների հետ, սակայն նույնիսկ Ֆրանսիայի բանկային համակարգը, որն անվտանգության առումով բանկային ոլորտում համարվում է առաջատար, որպես ռիսկային, դիտում է բաց բանկային գործունեությունը սակայն, չնայած դրան, մրցակցային առավելությունները կրկին տրվում են վերջինիս:

Քանի որ երկրների բանկային համակարգերը զարգացման մակարդակներով բավականին տարբերվում են միմյանցից՝ եվրոպական փորձի կիրառման համար անհրաժեշտ է ձևավորել ուրույն մոտեցում, հարմարեցնել երկրի բանկային համակարգի գործարքների ծավալներին, հաճախորդների նախապատվություններին, և իրականացնել այլ ոլորտային ցուցանիշների խորը վերլուծություն ու կանխատեսումներ: Բաց բանկային համակարգի ու բաց ֆինանսական դաշտի կիրառման համար անհրաժեշտ է ձևավորել ընդհանուր տեսլական կամ ուղի: Դա պետք է ներառի օրենսդրական դաշտի փոփոխությունները, ճիշտ քաղաքականության ընտրությունը, վերահսկողության մեխանիզմների սահմանումը, տվյալները կառավարող 3-րդ կողմերի ընտրությունը, նրանց գործողությունների շրջանակի սահմանումը:

Հայաստանի Հանրապետության համար բաց բանկային համակարգի ներդրումը համարվում է անհրաժեշտություն՝ հետագա հեռանկարով պայմանավորված, քանի որ ներկայումս բանկային համակարգն ունի արագ զարգացող տեխնոլոգիական ներուժ և անհավասար բանկային մրցակցություն, որոնք պոտենցիալ նախադրյալներ են բաց բանկային համակարգի կիրառման համար: ՀՀ-ում ֆինանսական գրագիտությունը նույնպես թույլ է զարգացած, որը պատճառ է դառնում ֆինանսական ռեսուրսների ոչ արդյունավետ տնօրինման ու ֆինանսական ոչ ճիշտ որոշումների կայացման համար: Դրա համար հաշիվների կառավարման գործում 3-րդ կողմի ֆինանսական միջամտությունը կնպաստի պահանջարկի կտրուկ ավելացմանը:

Բաց բանկային համակարգի կիրառելիության համար ՀՀ-ում անհրաժեշտ է խորացնել բանկերի ու 3-րդ կողմի միջև համագործակցությունը, որին հնարավոր է հասնել պետական ֆինանսավորման, աջակցության և վերահսկողության ներքո՝ խրախուսելով բանկերին տարածել իրենց տվյալները:

3-րդ կողմ համարվում են այն ամօինք, ովքեր կարող են հասանելիություն ունենալ հաճախորդի ֆինանսական տվյալներին ու տարածել դրանք՝ կատարելով զուտ խողովակի դեր՝ առանց այն հետազայում օգտագործելու կամ պահպանելու թույլտվության:

Այս դեպքում օգուտը կլինի համընդհանուր և կշահեն բոլոր կողմերը միասին. բիզնեսները և ֆինթեք ընկերությունները կունենան նոր հնարավորություն ու ծրագրեր, ո-

րի հիման վրա կգարագանեն նոր ապրանքներ ու ծառայություններ: Բանկային համակարգում տեղի կունենա փոփոխություն այն առումով, որ մրցակցությունը կմեղմվի ու այն բանկերը, որոնք առաջարկում են բարձր տոկոսադրույքով վարկեր, միանգամից դուրս կմղվեն խաղից, իսկ նոր ծնավորվող բանկերը հաճախորդին հնարավորություն կտան առաջարկել ավելի մրցակցային ծառայություններ: Հաճախորդի տեսանկյունից առավելությունն այն է, որ նրանք այդպիսով կդառնան ֆինանսապես ավելի գրագետ, կստանան ավելի որակով ծառայություններ:

Շատ կարևոր է, որ այն իրականացնելիս կատարվի նաև հաճախորդների տարանջատում՝ ըստ ֆինանսական վարքագծի, քանի որ ներդրումային վարքագիծ ունեցողները այլ մոտեցում ունեն հաշիվները տնօրինելիս, իսկ սպառողական վարքագիծ ունեցողները՝ այլ: Այս պարագայում սխալ կլինի նրանց դիտարկել նույն հարթակում ու տվյալների ստանդարտ վերլուծություն ու խորհրդատվություն իրականացնել: Կանխատեսելով, թե ովքեր կօգտվեն բաց բանկային համակարգի հնարավորությունից՝ այն կթիրախավորի հիմնականում տարբեր բանկերում ներկայումս գործող ավանդախին ու վարկային հաշիվներ ունեցող անձանց: Այս խնդրի լուծման համար կարելի է դիտարկել Հնդկաստանի օրինակը, որը խաղի մեջ է մտցրել UPI-ը՝ ավելի ցածր եկամուտ ունեցողներին ֆինանսական խաղի մեջ ներգրավելու համար: ՀՀ-ում բաց բանկային համակարգի ներդրումը՝ հնարավորություն կտա հետևյալ սցենարների կիրառման համար՝

- բոլոր ֆինթեք ընկերությունները կարող են առաջարկել API-ներ,
- կանցկացվի մրցույթ նրանց միջև և կընտրվեն որոշակի խաղացողներ,
- սկզբնական հնարավորություն կտրվի գործել բոլոր 3-րդ կողմի խաղացողներին, այնուհետև ազատ շուկայական մրցակցության միջոցով դուրս կմղվեն ոչ արդյունավետ ծրագրային փաթեթները:
- բաց բանկային համակարգը կունենա ստանդարտ կառուցվածք, այսինքն՝ ծրագրային փաթեթը կլինի համընդհանուր բոլորի համար:

Բաց բանկային համակարգի կիրառման մյուս կարևոր կետը տվյալների ստանդարտների մշակումն է, որի հիման վրա բանկերը ու ֆինանսական հաստատությունները կիրապարակեն իրենց տվյալները, և API-ների շրջանակում կմատուցեն ծառայություններ՝ մեղմացնելով անձնական տվյալների օգտագործման ռիսկը: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև հաճախորդների կարծիքը, քանզի ոչ բոլոր օգտատերերի շահերից կարող է բխել տվյալների համընդհանուր տարածումը:

KPMG international ընկերությունը իր կատարած լայնածավալ ոլորտային վերլուծություններում առանձնացնում է 6 կարևոր կետեր, որոնց բանկերը պետք է ուշադրություն դարձնեն համակարգի ներդրման համար. [6]

1. Հասկանալ մրցակցությունը և իրավական դաշտի գործող սկզբունքները աշխարհում, հատկապես ծանոթանալ այն երկրների փորձառություններին, երբ բաց բանկային համակարգի կիրառման արդյունքում հնարավոր է եղել մուտք գործել շուկա և գրավել շուկայի հիմնական հատվածները:
2. Հաճախորդների կրթություն և ընդգրկվածություն. հաճախորդները պետք է տեղեկացված լինեն իրենց տվյալների ընձեռած հնարավորություններին, և թե ինչպես կարելի է դրանց միջոցով հասնել իրենց նպատակին ու ստանալ օգուտներ:
3. Կարևորել տվյալների տարածումը, կենտրոնացնել ներդրումները՝ տվյալների տարածումը խթանելու համար, և տվյալների տարածումը բանկային ոլորտից հասցնել կոմունալ, հեռահաղորդակցման, նույնիսկ առօրյա գնումների տվյալների տարածման՝ ավելի արդյունավետ ծառայություններ առաջարկելու նպատակով:

4. Բարելավել տեխնիկական և գործարքային հնարավորությունները: Անհրաժեշտ է անընդհատ բարելավել API-ները և վերլուծական գործիքները՝ միևնույն ժամանակ կարևորելով տվյալների գաղտնիությունը և կիբերանվտանգությունը:
5. Ներդնել անվտանգություն ծրագրային հավելվածների միջոցով. սա ենթադրում է ոչ միայն տվյալների օգտագործման գաղտնիության ապահովում իրավական ակտերի միջոցով, այլ երաշխավորում, որ հաճախորդը վստահ և անվտանգ զգա իր տվյալները տարածելուց:
6. Զարգացնել գործընկերային հնարավորությունները՝ բացահայտելով և ձևավորելով նոր կապեր 3-րդ կողմերի հետ, ովքեր կարող են առաջարկել նոր ծառայություններ, ապրանքներ և բարելավել հաճախորդների վստահությունը:

Բաց բանկային համակարգի նախատիպեր այժմ առկա են Հայաստանում, քանի որ ՀՀ-ում Tell Cell, i-dram, ARCA վճարային համակարգերը թույլ են տալիս այլ բանկային հաշիվներից կատարել տարբեր գործարքներ՝ շատ փոքր պայմանագրային վճարներով, օգտագործելով սեփական ծրագրային ապահովման հավելվածները: Այն կարող է հետագայում համալրվել հաճախորդների այլ տվյալներով նույնպես, ինչպիսիք են՝ գնումների, քարտային գործարքների ու վարկային պատմությունների վերաբերյալ տվյալները, ավանդային հաշիվների մասին տեղեկատվությունը, ինչպես նաև հաճախորդի կողմից տարածվող ֆինանսական այլ տեղեկատվությունը:

Բաց բանկային համակարգի առավելությունները խմբավորենք հետևյալ 4 կետերի շուրջ.

1. Վճարումների պարզեցում. վճարումները կդառնան ավելի էժան, արագ և ապահով: Բանկը այլևս կարիք չի ունենա հենվել GLOBAL Payments և World Pay համակարգերի վրա, այլ կկարողանա օնլայն խանութների հետ գործարքներ կատարել առանց միջնորդների:
2. Համախմբում կամ ամբողջ տեղեկատվությունը ներկայացնում է 1 էկրանին. – բանկերի, հաճախորդների ու քարտատերերի համար շատ հաճախ հանդիպող ու զլխացավանք պատճառող խնդիրը միանգամից մի քանի ծրագրային փաթեթներից օգտվելն է սեփական հաշվեկշիռն իմանալու համար: Բաց բանկային համակարգը թույլ կտա տեսնել այն միանգամից, և հեշտությամբ կառավարել տարբեր բանկերի քարտային հաշիվները, ավանդները և վարկերը:
3. Բանկերը ու ֆինանսական կազմակերպությունները տիրապետում են ահռելի քանակով տվյալների՝ սկսած կոմունալ վճարներից, վերջացրած սուպերմարկետում կատարած գնումներով, որոնց հետագա տարածումը հնարավորություն կտա հաճախորդներին մշակելու այն ավելի էժան ծառայությունների ձևով, ինչպես նաև ֆինանսական խորհրդատվության համար:
4. Ավելի հեշտ կդառնա պարտք վերցնելը փոքր և միջին բիզնեսի, ինչպես նաև սպառողների համար: Փոքր ու միջին շատ ձեռնարկություններ բավականին ժամանակ են ծախսում, որպեսզի կազմեն և հավաքագրեն պարտավորություններն ու ակտիվները: Ներկայումս ֆինթեք ընկերությունները այս հարցին արդեն անդրադարձել և առաջարկում են լուծումներ՝ վերցնելով տեղեկատվություն ընկերության բանկային հաշիվներից և ուղղելով այն դեպի օնլայն պլատֆորմներ, որտեղ այն դասակարգվում է և համախմբում եկամուտներն ու ծախսերը՝ պարբերաբար դրանց հիման վրա իրականացնելով կանխատեսումներ և տալով խորհրդատվություն երկարաժամկետ ֆինանսական պլանավորման վերաբերյալ: Դա իր հերթին օգնում է վարկատուներին կատարել ավելի արագ ու հաստատական որոշումներ, թե արդյոք անհատը կամ կազմակերպությունը վարկունակ է:[2]

Այս ամենի արդյունքում ֆինանսական ծառայությունների արդյունաբերության ոլորտում հեղափոխությունը անխուսափելի կլինի: Այն ամբողջությամբ կփոփոխի հաճախորդների հարաբերությունները բանկերի ու ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերությունների հետ, կառաջարկի նոր ուղիներ և կխթանի նորարարություն և մրցակցությունը ֆինանսական ապրանքներում:

ՀՀ տնտեսության համար եվրոպական երկրների փորձի կիրառումը բավականին հաջողված մոտեցում է, և նման իրավիճակում նպատակահարմար կլինի այն տեղայնացնել Հայաստանի Հանրապետությունում ու դիտարկել դրա դրական ու բացասական կողմերը: Եվրոպական երկրներում գործում են կանոնադրական սահմանափակումների հաջողված օրինակներ, ինչպիսիք են Մեծ Բրիտանիայի, Արգենտինիայի, Մեքսիկայի օրինակները, բացի այդ՝ հնարավոր է կիրառել նաև այլ մոտեցումներ՝ ինչպիսին է Բանգլադեշի ու Հնդկաստանի օրինակը, որը օգտագործում են էլեկտրոնային փող թողարկողների տվյալները՝ այդպիսով ավելի շատ հասանելիություն տալով ցածր եկամուտ ունեցող խավին:

Բաց բանկային համակարգի ներդրումը բավականին առաջադիմական քայլ կլինի ՀՀ բանկային համակարգի համար, քանի որ նորագույն տեխնոլոգիաների աճին զուգընթաց ֆինանսական տեխնոլոգիաներն անընդհատ կատարելագործվում են, ուստի ցանկալի է, որ բանկերը հնարավորինս շուտ կիրառեն բաց բանկային համակարգի գործիքները՝ դրանց կատարելագործման ու հետագա արդյունավետ զարգացման նպատակով: Քանզի բաց բանկային համակարգն իրենից ներկայացնում է բավականին ռիսկային գործիք, և տվյալների տարածումը շատ հաճախ կարող է նախորդված նպատակին չծառայել, ՀՀ-ում պետության և կենտրոնական բանկի արդյունավետ միջամտությունը ու համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծումը կարևոր նախապայմաններ կստեղծի հետագա կարգավորումներն իրականացնելու համար: Դա ենթադրում է, որ բաց բանկային համակարգի օրենսդրական կարգավորումների օրյեկտ պետք է դառնա բոլոր բանկերի ու խոշոր ֆինանսական և այլ հաստատությունների տվյալների տարածումը, ինչի արդյունքում կնորմավորվի բանկերի միջև մրցակցությունը: Այդ դեպքում նոր, ոչ շատ մրցակցային բանկերը, որոնք չունեն ներդրված սեփական էլեկտրոնային բանկինգ ծառայություններ, 3-րդ կողմի ծրագրային միջավայրերի միջոցով կկարողանան հաճախորդներին ընձեռել բանկային հաշիվները կառավարելու հնարավորություններ և կիրառել տվյալների վերլուծության վրա հիմնված ծառայություններ:

Օրինական դաշտի միջոցով կսահմանվի տվյալների տարածման ու կիրառման կարգը, որը հնարավորություն կտա նվազեցնել տվյալների անվտանգության հետ կապված բազմաթիվ ռիսկեր և ակտիվացնել հաճախորդների ներգրավման գործընթացը:

Հայաստանի Հանրապետությունում բաց բանկային համակարգերի կիրառման առավելությունները կօժանդակեն նաև անհատ ձեռներեցներին՝ նրանց հատկացնելով բիզնես վերլուծության բազմաթիվ գործիքներ՝ մատչելի գներով: Դա ապագայում հնարավորություն կտա նաև խուսափել մեծ ծավալով փաստաթղթեր ու վճարային կտրոններ կուտակելուց և կհեշտացնի հաշվապահական գործընթացները: Այս պարագայում կունենանք միանգամից 2 դրական արդյունք: Դրանցից մեկը ստվերի վերացումն է, իսկ մյուսը՝ վճարումների թվայնացման մակարդակի ավելացումը: Դա պայմանավորված է նրանով, որ բաց բանկային համակարգի նոր գործիքների կիրառումը առավել դյուրին կդարձնի էլեկտրոնային վճարումներ կատարելու գործընթացը, և դրան զուգահեռ հնարավորություն կտա կառավարել տվյալները:

Բաց բանկային համակարգը գերծ է նաև ռիսկերից: Կարևոր է հաշվի առնել կայունության, գաղտնիության և կենտրոնացվածության ռիսկը: Նման թիրախներին հասնելը կարող է հակասել միմյանց, դրա համար հաճախ պետք է ընտրություն կատարել

դրանց միջև: Դա պայմանավորված է նրանով, որ տարբեր խաղացողներ են ընդգրկված բաց բանկային համակարգում: Ներկայումս տվյալների տարածումը համարվում է նորամուծություն և պրակտիկ օրինական դաշտ գոյություն չունի, որը կարողանա երաշխավորել բոլոր կողմերի շահերի պաշտպանությունը: Նման խնդրի լուծման համար անհրաժեշտ է, որ պետական համապատասխան կառույցները, ովքեր ներկայացնում են հասարակական առանձին խավերի շահերը, բանակցություններ իրականացնեն և համակարգեն իրենց աշխատանքը: Դրանց թվում են կենտրոնական բանկը, երկրի ֆինանսաբանկային համակարգը կարգավորող կառույցները՝ կապված ֆինանսական ոլորտի տվյալների տարածման հետ, մրցակցություն ապահովող մարմինները և տվյալների գաղտնիության համար պատասխանատու մարմինները:

Քանի որ բաց բանկային համակարգն ամբողջությամբ հիմնված է տվյալների վրա, մեծ ռիսկեր են ստացաձվում տվյալների ոչ տեղին օգտագործման, հաճախորդների տվյալների պաշտպանության և բավարար վստահության առաջացման հետ, քանզի հաճախորդները չունեն պատկերացում, թե ինչպես կարող են տվյալները օգտագործվեն, և որոնք են բաց բանկային համակարգի առավելությունները: Դրա համար տվյալների օգտագործումը պետք է լինի կարգավորվող և վերահսկվող գործընթաց:

Ամփոփելով նշենք, որ Հայաստանում կարելի է արդյունավետ ներդրել բաց բանկային համակարգ և ոչ միայն կարելի է, այլ նաև անհրաժեշտ է՝ բավարար մրցակցություն ունենալու և հետագա զարգացման նախապայմաններ ստեղծելու համար: Անհրաժեշտ է հաշվի առնել ռիսկերը, սակայն ընձեռած առավելությունների համեմատ՝ ռիսկերը շատ աննկատ են: Ամենամեծ ռիսկը, ոչ բավարար քանակով հաճախորդների ներգրավումն է բաց բանկային համակարգ, սակայն արդյունավետ վերահսկողություն իրականացնելու ու հաճախորդների մոտ վստահություն առաջացնելու դեպքում այդ խնդիրը նույնպես կլուծվի: Հաճախորդների մոտ պետք է առաջացնել վստահության և անվտանգության զգացողություն, որին կարելի է հասնել երաշխավորելով, որ ոչ մեկի տվյալները չի տարածվելու առանց նախնական համաձայնության, 1 էկրանին պարզորոշ ու թափանցիկ կերպով արտացոլվելու է, թե ինչպես են տվյալները տարածվում, ինչքան ժամանակ, և ինչ նպատակով է այն օգտագործվում: Տվյալների տարածման դադարեցումը պետք է այնքան հեշտ լինի, որքան դրանց տարածումը: Արժ-ները պետք է անցնեն վավերացման գործընթաց, որը պետք է լինի բավականին խիստ ու մրցակցային: Կարևոր է նաև գիտակցել մի պարզ ճշմարտություն՝ բաց բանկային համակարգի կիրառման դեպքում խնդիրներ առաջանալու, են և դրանցից խուսափելու ու հեշտ կանխարգելելու համար պետք է կազմվի վեճերի լուծման համակարգ:

Ներկայումս Հայաստանը գտնվում է քիչ թե շատ բարենպաստ դրության մեջ, քանի որ եվրոպական երկրներում իրականացվում են բաց բանկային համակարգի ներդրման գործընթաց ու փորձարկում, որտեղից մենք կարող ենք անմիջապես օգտվել՝ ներդնելով փորձարկված օրենսդրական ու կարգավորման գործիքներ և կիրառելով արդյունավետ մոդելներ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Open Banking: European Countries Need to “Harmonize” their Approach to Open Finance, Andréa Toucinho from Partelya Consulting Suggests, June 21, 2020 article By Omar Faridi.
2. Open banking, and what it means for European fintechs and consumers – Part 1, By Bernardo Arnaud, September 12, 2019.
3. Open Banking around the world “Towards a cross-industry data sharing ecosystem”, Article by EMEA Center for Regulatory Strategy, publisher: Deloitte.

4. Open Data and the Future of Banking, by Greg Chen, Xavier Faz, CGAP Leadership Essay Series, 23 october 2019.
5. EY “Open banking services” web page: https://www.ey.com/en_gl/banking-capital-markets/open-banking-services.
6. John Hallsworth, Robert Ruark, Ian Pollari, «Open banking opens opportunities for greater customer value», KPMG International, «Reshaping the banking experience», 2019 trends in review.
7. Global open banking report 2020, Beyond Open Banking- Into the Open Finance and Open Data Economy.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Միջազգային փորձը տեխնոլոգիապես բաց բանկային գործունեության դաշտում (open banking)

**և նրա կիրառելիությունը ՀՀ-ում
Դավիթ Մինասյան**

Սույն հետազոտության խնդիրը բաց բանկային համակարգի բնութագրի ներկայացումն է, միջազգային փորձի ուսումնասիրությունը տվյալ համակարգի կիրառման բնագավառում, նրա առավելությունների վերհանումը, ինչպես նաև բաց բանկային համակարգի ներդրման արդյունքում հնարավոր ռիսկերի ուսումնասիրությունն է: Բաց բանկային համակարգն իր բնույթով համարվում է նորամուծություն բանկային և ֆինանսական ոլորտում, քանի որ հնարավորություն է տալիս հաճախորդներին տարածել իրենց բանկային հաշիվների տվյալները և 3-րդ կողմի ֆինթեք կազմակերպություններին հնարավորություն տալ գործարքներ կատարել և վերլուծական կամ այլ բնույթի ծառայություններ առաջարկել: Բաց բանկային համակարգի ուսումնասիրության արդյունքում սույն աշխատանքով այն դիտարկվել է նպատակահարմար ՀՀ-ում ներդնելու համար՝ շնորհիվ առաջարկվող նորանոր լուծումների և հաճախորդամետ բնույթի: Միջազգային տարբեր աղբյուրների ուսումնասիրության հիման վրա աշխատանքում ներառված են այն հիմնական նախապայմանները և քայլերը, որոնք անհրաժեշտ են բաց բանկային համակարգի արդյունավետ ներդրման և հետագա զարգացման համար:

РЕЗЮМЕ

**Международный опыт в открытом банкинге и возможности его применения в Армении
Давид Минасян**

Ключевые слова: открытый банкинг, финтех, третья организация, международный опыт.

Задача данного исследования – представить характеристики технологически открытой банковской системы, изучить международный опыт в области применения данной системы, выявить преимущества, а также изучить возможные риски в результате внедрения открытой банковской системы. Данная аналитико-исследовательская работа включает изучение опыта основных стран, которые эффективно внедрили инструменты открытой банковской системы. Выявлены основные особенности, характерные для отдельных стран, после чего рассмотрена целесообразность использования открытой банковской системы в Армении. Открытая банковская система по своей природе считается инновационной в банковском и финансовом секторе, поскольку она позволяет клиентам распространять информацию о своих банковских счетах, позволяет сторонним финтех-организациям совершать транзакции, предлагать

аналитические или другие виды услуг. В работе представлена целесообразность инвестирования его инструментов в Республику Армения в связи с предложенными новыми решениями в пользу клиентов. На основе изучения различных международных источников в работе показаны основные предпосылки и шаги, необходимые для эффективного внедрения открытой банковской системы и ее дальнейшего развития.

SUMMARY

International Experience in Open Banking and It's Implementation in The Republic of Armenia Davit Minasyan

Keywords: Open banking, fintech, 3-rd party service providers, data sharing, application of international experience

This research aims to explain the essence of open banking, research the international experience in the open banking system, highlight its main privileges, and study different possible risks that can arise due to investment in the open banking system. This research paper includes the experience of those countries, which have successfully applied the open banking tools. After revealing the distinctive features of other countries, the possibility of implementing open banking in the Republic of Armenia has been considered. Open banking is viewed as an innovation in Banking and financial sectors as it allows customers to distribute their bank account information and enables third-party fintech organizations to make transactions and offer analytical or other services.

This research paper supports the idea that the investment of open banking in Armenia is possible. For doing so, it is necessary to find the best ways to integrate the international practice and experience.